

Պետերուն, Ս. Էջմիածնի Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ Մեծի Տանն Կիլիկիայ գոյգ Գահակալներուն, Հայ Կթղ. Ամենապատիւ Կաթողիկոս-Պատրիարքին, Նուիրապետական Աթոռներու Առաջնորդներուն, Հայաստանի եւ Սփիւռքի Մշակութային Մարմիններուն, յատկապէս՝ ՀՍՍՀ Գիտութիւնների Ակադեմիային, Երեւանի Մեսրոպ-Մաշտոցի անուան Մատենադարանին եւ Պետական Համալսարանին, արտասահմանի Բարեգործական ու Կրթական Հաստատութիւններուն, Լիզպոնի Գ. Կիւլպէնկեան Հիմնարկութեան, Հ. Բ. Ընդհանուր Միութեան, Հայրենակցական Միութիւններուն, Կրօնական Մարմիններուն, Միջազգային Մամուլի ներկայացուցիչներուն, եւ բոլոր անոնց՝ որոնք շնորհաւորական սրտագեղ պատգամներով, նամակներով ու հեռագիրներով, գրական ու գեղարուեստական տօնախմբութիւններով, ակադեմական նիստերով ու գիտական ելոյթներով, պատմական համադրումներով, հեռատեսլային ու ձայնասփիւռային հաղորդումներով (Փարիզ, Վենետիկ, Վատիկան, Մոնթեվիտոյ), մասնակցեցան մեր Յոբելեանին, ոգեկոչելով՝ երկրագունտային տարածքի վրայ՝ Հայութեան մեծ գաւակը, Միսիքար Սեբաստացին:

«Բազմավէպ»ի ներկայ թիւին վերջին մասը պիտի հնչեցնէ համերգ մը յարգանքի եւ շնորհակալութեան, խորունկ երախտագիտութեամբ եւ յուզումով թրթռուն, հրատարակելով այդ բոլորին ցնծագին արձագանգը:

Յարգանքի եւ շնորհակալութիւն յատկապէս մեր սիրելի Հայ Մամուլին, որ լայնօրէն բացաւ իր սիւնակները՝ հանդէսներու նկարագրականներով, վերլուծիչ խմբագրականներով, եւ յաճախ՝ ամբողջական թիւեր նուիրելով Միսիքարի յիշատակին:

Յոբելեանի ակարտին, Միսիքարի որդիներս՝ կրկին անգամ հաւաքուած անոր լուսաշող դամբանին շուրջ, ոգեւին կ'ողջունենք անոր խանգարուրքն հանդիսացող՝ երբեմնի մայրաքաղաքը Արծրունի իշխաններուն, հեռաւոր Սեբաստիան սիրելի, իր պանծալի Սուրբ Նշան վանքով, եւ անոր նուիրական պարիսպներուն տակ՝ իրենց անմահական նիւթը հանգչող բազմաթիւ հայ վանականներով անտէրունչ, որոնք ներշնչարանն եղան պատանի Միսիքարի ծրագիրներուն: Ոգեւորութեան սարսուռ մը կ'ողողէ մեր սրտերն ալ այսօր, մինչ երկիւղած հաւատով եւ շնորհապարտ զգացումներով, Աստուծոյ եւ Հայրենիքի առջեւ կը նորոգենք մեր երդումը՝ նուիրումի եւ անխնայ աշխատանքի, «ի հոգեւոր լուսաւորութիւն Ազգիս մերոյ Հայկազուն», ջերմագին իղձերով յարգանքի եւ շնորհակալութեան:

ԽՄԲ.

## ՄԻՍԻԹԱՐ

### ԵՒ ՔՐԻՍՏՈՆԵԱՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՒՆԸ \*

#### ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Պատիւ կը նկատեմ ինծի՝ Սուրբ Ղազարի Միսիթարեան Հայրերու հրաւերը, զոր ընդունեցայ մեծ յօժարութեամբ, այս յարգարժան ակումբին հետ միասնաբար խորհրդածելու համար այն գերազանց դէմքին մասին՝ որպիսին է Երանաշնորհ Միսիթար, Հիմնադիրը Վենետիկի ու Վիեննայի հայ Հաստատութիւններուն:

Հաճոյքով ընդառաջեցի այս հրաւերին, որովհետեւ ուղղուած էր ինծի՝ համակրելի հայ վարդապետներու կողմէ: Անոնց գիտական աշխատանքը սորված եմ ես գնահատել այն օրերէն իսկ՝ երբ փրկիսփայտութիւն կը դասաւանդէի Հարլեմի իմ բնիկ թեմիս մէջ: Հոն է, արդարեւ, կամ աւելի ճիշտ՝ Ամսդերտամի մէջ է որ, 1666ին, Ոսկան Երեւանցի կը հրատարակէր հայերէն առաջին Աստուածաշունչը, հայ գաղութի տպագրատունէն: Յաջորդաբար՝ Միսիթար ըստանձնած է այդ տպարանը, որ ձեր այժմեան այնքան համբաւաւոր տպարանին սկզբնահայրն է եղած:

Սիրայօժար յանձն առի ներկայ բանախօսութիւնը, դիւթուած այն հնարաւորութեան՝ որով պիտի կարենամ ձեզի հետ միասնաբար խորհրդածել - ես՝ որպէս Նախագահ Քրիստոնեաներու Միութեան Քարտուղարութեան - թէ ի՞նչ կ'ըմբռնէր Միսիթար, Հայ Եկեղեցւոյ «Միութեան Սատարիչը», երբ կը խօսէր միութեան մասին:

\*) Պաշտօնական բանախօսութիւն Ն. Վ. Ծիր. Յովհաննէս վիպրամտսի՝ եպիսկոպոսապետ Հովանայի եւ Նախագահ Քրիստոնեաներու Միութեան Քարտուղարութեան, կատարուած Վենետիկի Տոժական պալատին մէջ, 22 Հոկտ. 1977ին, երեջ. Միսիքար Արքեպիսկոպոս Յովնան երբորդ դարադարձի հանդիսաւոր տօնախմբութեան առիթով:

1. Հմտ. P. MINAS NURIKHAN, Il servo di Dio Abate Mechitar, Venezia S. L. 1914, էջ 329 յջ. (այսուհետեւ՝ NURIKHAN):

Ի՞նչ կը հասկնար Մխիթար «միութիւն» ըսելով, երբ կը հիմնէր իր Միաբանութիւնը, որուն նպատակը պիտի ըլլար հրահրել այս միութիւնը: Կ'ուզեմ խորհրդածել, ձեզի հետ, թէ արդեօք Մխիթարի ըմբռնումը միութեան՝ նման էր Յովհաննէս ԻԳ. եւ Պօղոս Զ. Պապերու ըմբռնումներուն, երբ ասոնք կը հիմնէին ու կը հաստատէին Քրիստոնեաներու Միութեան Քարտուղարութիւնը: Զեզի հետ կը փափաքեմ քննել թէ արդեօք կրնա՞նք տակաւին դասեր առնել Երնչ. Մխիթար Հիմնադրին երկու հարիւր յիսուն տարի առաջ կատարած դործէն՝ թէ ոչ: Կամ՝ արդեօք պէ՞տք ենք եղբայրացնել – յարգելով հանդերձ այսպիսի մեծ անձնաւորութիւն մը – թէ իր գաղափարները այլեւս գերազանցում են ու չեն կրնար պատշաճօրէն նպաստել Միութեան դործին:

## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՄԵԽԻԹԱՐԻ ՇՐՋԱՆԸ ԿԱՆԵՈՂ ՏԵՍԱԿԵՏՆԵՐ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Մխիթար կը ծնի այն շրջանին, երբ՝ քանի մը տասնեակ տարիներէ ի վեր՝ նոր փուլի մը մէջ մտած էր քրիստոնեայ Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ կրօնական միութեան վերաստեղծումի հին ծրագիրը, արեւմուտքի միսիոնարներու զանգուածային առաքումով դէպի Արեւելք: Ասիկա գրեթէ կը զուգադիպէր Հաւատոյ Տարածման Ժողովի հիմնարկութեան հետ, 1620ին:

Միսիոնարներու այս առաքումը կը միտէր նպաստ մը ընձեռել Արեւելցիներուն, մարդերով ու միջոցներով, որպէսզի անոնք մասնակից դառնային Արեւմուտքի վանական նոր ծաղկումի արգասիքներուն, ինչպէս նաեւ օգնելու համար անոնց՝ որ ժամանակներուն համընթաց մշակոյթի մը տիրանային: Միսիոնարներու այս առաքումը նպատակ ունէր, որպէս մասնական աշխատանք, արեւմտեան կաթողիկէ պալմաններ ու քարքեր տարածել Արեւելքի մէջ, ջանալով զանոնք աստիճանաբար ամրացնել՝ անձնական խոհեմ չփումներով: Այս առաջադրանքով, Հայոց մէջ կը գործէին լատին միսիոնարներ՝ Փրանկիսկեան, Դոմինիկեան եւ Յիսուսեան Կարգերէն. ինչպէս նաեւ հայազգի քահանաներ՝ Հռոմի Ուրբանեան Վարժարանի նախկին սաներէն:

Աւելին. նոյնիսկ կեանք առած էր, երեք հարիւր տարիէ ի վեր, ամբողջովին լատինահայ Միաբանութիւն մը, համբաւաւոր «Միաբանող Եղբայրներ»ը, որոնք Մխիթարի ժամանակ՝ նահանգ մը կը կազմէին, Դոմինիկեան Կարգէն: Բայց այս Միաբանութիւնը այնքան

լատինացած էր եւ ինքն իր մէջ փակուած, որ Հաւատոյ Տարածման Ժողովի Միաբանութիւններն անգամ մեծ բան մը չէին ակնկալեր անոր դործունէութենէն. եւ, օրինակ մը գտնէ թուելու համար, 1718ին, մերժողական կարծիք կը յայտնէին՝ Զմիռնիոյ մէջ վանատուն մը բանալու անոնց ծրագիրին<sup>2</sup>:

Մխիթար կ'աւաղէր արեւմուտքի այդ լատին միսիոնարներու, ինչպէս նաեւ Ուրբանեան Վարժարանի նախկին-աշակերտներու դործին լատինացուցիչ ձգտումը, որ կը յայտնուէր մինչեւ իսկ քերականական ձեւաբանութեան մէջ, այնպէս՝ ինչպէս ծիսակատարութեան մէջ. իրողութիւն՝ որ, Հայաստանի դաւառները շրջապայով երիտասարդ Մխիթարի տեսակէտով, ոչ սակաւ ընդդիմութեան կը բախէր՝ կղերին ու Ժողովուրդին մէջ:

1703ին, Կ. Պոլսոյ Առաքելական Փոխանորդը՝ Գրպօ. Գասպարինի լաւ ըմբռնած էր թէ «լատին միսիոնարները, թէեւ գիտնական ու եռանդուն անձնաւորութիւններ – բառացի կը յիշատակեմ հոս իր խօսքերը – չունէին միշտ այն հնարաւորութիւնները, ու մերթ նաեւ վարուելակերպը, առաւելագոյն արդիւնքներով բանակցելու համար Հայոց կամ առ հասարակ Արեւելցիներու հետ»<sup>3</sup>: Յաճախ այս միսիոնարները կու գային արծարծել դարերէ ի վեր մարած վէճերը՝ Լեւոն Պապի ու Քաղկեդոնի Ժողովին շուրջ: Կորնթոսի լատին Արքեպիսկոպոսը, 1708ին, դանդաղ կը յայտնէր թէ ինչպէս կարգ մը կրօնաւորներ – օժտուած ըլլալով հանդերձ Հաւատոյ Տարածման Ժողովէն՝ իր ունեցածներուն գրեթէ հաւասար իրաւասութիւններով – կամայականօրէն կը գործածէին զանոնք, «գրամ շորթելէն զատ՝ ուրիշ բան չհետապնդելով»<sup>4</sup>:

Մխիթարի օրով, արեւմուտքի միսիոնարները՝ բնականաբար՝ հսկարտ էին արեւմտեան Եկեղեցւոյ մէջ ծաղկող վերանորոգումով: Հետեւաբար, ամենեւին իրենց մտքէն չէր անցնէր՝ թաքուն դանձերը փնտռել արեւելեան հոգեկանութեան: Իրենց աչքին՝ Արեւելցիները այնքան ստորադաս կը թուէին մշակոյթով, որ անհնարին կը նկատէին Արեւմուտքին մերձեցումը Արեւելքի: Արեւելցիներն էին, որ՝ ըստ իրենց՝ պէտք էին դառնալ կաթողիկէ ճշմարտութեան, ճշմարտ-

2. Հմմտ. P. GUALBERTO MATTEUCCI, Mons. Pier Battista Mauri e il Ven. Abate Mechitar, տե՛ս «Մխիթար» Յուշարձան Լուսանորդ Մխիթար Արքայի մահուան երկրորդ դարադարձին, «Քաղմակէպ» բացառիկ, 1949 թ. 7-12 (այսուհետեւ՝ Մ), էջ 113-146, աստ՝ էջ 117:

3. Հմմտ. P. GIOVANNI ODOARDI, Mons. Gaspare Gasparini O. F. M. Conv. Vic. Patr.le di Constantinopoli e gli Armeni Cattolici d'Oriente, տե՛ս Մ, էջ 68-90, աստ՝ էջ 79:

4. Հմմտ. P. A. REDIGONDA, Angelo Maria Carlini O. P. Arciv. di Corinto e il giovane Ordine dei Mechitaristi, տե՛ս Մ, էջ 91-112, աստ՝ էջ 105:

տուրիստները՝ որ այդ միտնարներուն համար կը նշանակէր արեւմտեան ճշմարտութիւն: Ասոնք հասած էին մինչեւ իսկ հաստատուելու թէ հայ քահանաներէն սրբապետութեամբ Հացը ուրիշ բան չէր՝ բայց եթէ սոսկական հաց մը: Իսկ հաւատացեալները, որ իրենց կը հետեւէին, հեշտօրէն կը կրկնէին նման դատաստաններ: Կ. Պոլսոյ Առաքելական Փոխանորդը, 1702ին, քննելով հայ կաթողիկէներու կրած հաւածանքներուն պատճառները, կը գրէ Հաւատոյ Տարածման Ժողովին (դարձեալ բառացի կը յիշատակեմ). «Յիսուսեան Հայրերու եկեղեցիները յաճախող Հայերը ստէպ կը նախատեն իրենց միւս հայրենակիցները՝ զանոնք որակելով բանադրուած հերետիկոսներ եւ դատապարտեալներ»<sup>5</sup>:

\* \* \*

Եթէ մեր ականջներուն անհաճոյ կու գայ լսել սխալներն ու թերութիւնները յիշեալ արեւմուտցի միտնարներուն՝ իրենց ուսուցման եւ վարուելակերպին մէջ, միւս կողմէ ալ պէտք չենք զանոնք խստօրէն դատել: Պէտք ենք յիշել որ իրենց ժամանակ արդէն աւելի դրական հանդամանք մը առած էր «միութեան» ըմբռնումը՝ քան խաչակրութեան շրջանին: Միտնարները Արեւելք կը մեկնէին այլեւս ո՛չ թէ յաղթահարելու համար Թուրքերը, այլ հոգեւոր աշխատանք մը տանելու նպատակով: Նախապէս, կը յուսային միութիւնը դոյաջնել՝ Սրբազան Զինակցութեան ներդրութեամբ, խաչակրութեան դարաւոր ճիգերով, աւանդաբար ներշնչուած ու քաջալերուած Պապական իշխանութենէն, նպատակ ունենալով դիւստրաբար զինուորական ու քաղաքական լուծում մը պարտադրել՝ Արեւելքի եւ Արեւմուտքի քրիստոնեաներու բաժանման հարցին: Սաչակրութիւններու քաղաքական հետեւանքները եւ պետական կամ եկեղեցական կառավարութեան վարչաձեւերը, որոնք հաստատուած էին Արեւելքի վենետիկեան հողամասերուն վրայ, մինչեւ Միթարի ծնունդը կանխող օրերը, ինքնաբերաբար պիտի մղէին կաթողիկէ հաւատացեալ մը երեւակայելու՝ թէ եկեղեցւոյ միութեան հնարաւոր վերակազմութիւնը իրադրութիւնէն քիչ երեք հանգրուաններով:

— կաթողիկէ պետութիւններու կողմէ զինուորական գրաւում՝ Թուրքիոյ ենթակայ քրիստոնեայ երկիրներու:

— Եպիսկոպոսական աթոռներու վրայ հաստատում՝ Պապական իշխանութեան ենթակայ նուիրապետութեան, ի դրոժ զնելի արեւմտեան նորադոյն վարչաձեւերով:

5. Հմտ. ODOARDI, յիշ. գործ, էջ 82:

— եւ հոսկ՝ կանոնական ու հոգեւոր վերակազմութիւն քրիստոնեաներու միութեան:

Դրական փոփոխութիւն մը տեղի ունեցած էր, ուրեմն, որովհետեւ փոխանակ օգտադրութիւն զինուորական ոյժը, կը ձգտէին առաւելապէս հոգեւոր աշխատանքի մը: Բայց այս կառուցուածքին մէջ, հարկ է նկատել նաեւ ժխտական փոփոխութիւն մը՝ Արեւելքի եկեղեցիներուն հետ յարաբերելու աստուածաբանական ըմբռնումին նկատմամբ: Արդարեւ, Փլորենտիոյ Ժողովին մէջ խօսուած էր պարզապէս հաղորդակցութիւնը վերակազմելու մասին՝ ընդ մէջ Գրիստոսի Մէկ ու Միակ եկեղեցիին երկու հաստուածներուն: Փլորենտիոյ Ժողովը նկատած էր արեւելցի հաւատացեալը որպէս անդամ միւսնոյն եկեղեցիին մէկ մասին. մաս՝ որու հետ հարկ էր վերահաստատել նուիրապետական միութիւնը: Ընդհակառակն, այս շրջանիս, լատին միտնարները թրծուած էին նոր եկեղեցաբանութեամբ մը, որ անխորականօրէն կը գործածէր «ոչ-կաթողիկէ» բառը, նշանակելու համար հեթանոսներն ու մահմետականները, բողոքականներն ու արեւելցիները. եկեղեցաբանութիւն՝ որ, հետեւաբար, կը նկրտէր «դարձի բերելու» իւրաքանչիւր անհատ առանձնապէս:

\* \* \*

Ահա գծեցինք զոյգ պատկերները հնարաւոր միութեան, պատկերներ՝ որոնք տարածուած էին Արեւելքի եւ Արեւմուտքի մէջ, Միթարի օրերուն: Մէկը՝ կազմուած արեւմուտցի եւ արեւելցի բաղմաթիւ կաթողիկէներու մտքին մէջ, միւսը՝ տակաւին Թարմ՝ Թուրք կառավարիչներու եւ զինուորականներու յիշողութեան մէջ:

Մէկը, միակերպ միութիւն՝ եկեղեցական ծէսերու եւ սովորոյթներու, իրադրութիւն՝ հոգեւոր յաղթանակովը լատին ծէսին — որ գերազանց նկատուած էր քան հայկականը — եւ առանձնական դարձերովը ամէն իւրաքանչիւր անհատի:

Միւսը, նմանապէս միակերպ միութիւն՝ եկեղեցական ծէսերու եւ սովորոյթներու, թէ՛ արեւելեան եւ թէ՛ արեւմտեան ճակատներուն մէջ, իրադրութիւն՝ Արեւմուտքի զինուորական յաղթանակովը Թուրքերուն վրայ, որոնք կը ճնշէին Հայերը. (կը գլուշանամ գործածելէ այն ժամանակի եղրաբանութեամբ՝ «քրիստոնեայ ղէնքերու յաղթանակով» բացատրութիւնը):

6. VITTORIO PERI, Conferenza per il Congresso di Studi per il IV° Centenario del Pont. Coll. Greco, տե՛ս «L'Osservatore Romano», 18 Յուլիս 1977:

Մխիթարի շրջանին, այս զոյգ ձգտումները կը ձուլուէին իրարու հետ: Կը զգացուէր կարիքը ձերբազատուելու զինուորական դաժնոր միջամտութենէն, բայց — Հակաբարենորոգումի ազդեցութեան տակ — չէր վերածաղկեր եկեղեցաբանական նախկին մտայնութիւնը՝ Միակ Եկեղեցիի:

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ՄԵԽԻԹԱՐԻ ԻՒՐԱՅԱՏՈՒԿ ՏԵՍԱԿԵՏՆԵՐԸ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Մխիթար, իր ուղեւորութեանց ընթացքին, բազմատեսակ անձնաւորութիւններու հետ ունեցած անհամար խօսակցութիւններէն շատ լաւ կը թուէր ըմբռնած ըլլալ՝ թէ իր ժամանակակիցները ինչ կը խորհէին քրիստոնեաներու միութեան եւ դայն իրազործելու եղանակներու մասին: Ասկէ՝ իր մէջ կը ծագէր միութեան նոր գաղափարական մը, իւրայատուկ գաղափարական մը, որ յատկօրէն կը զանազանուէր նախայիշատակեալ զոյգ ուղղութիւններէն: Փորձենք, ուրեմն, միասնաբար վերակազմել՝ Եկեղեցիներու միութեան նկատմամբ Մխիթարի յատուկ ըմբռնումին խճանկարը:

1.— Միութեան այս գաղափարական խճանկարին առաջին ոսկեհատիկն է Մխիթարի սէրը՝ հանդէպ իր ազգին, կամ աւելի ճիշտ՝ հանդէպ քրիստոնէական հաւատքի հայեցի արտայայտումին: Իր երիտասարդութեան, Սեբաստիոյ Ս. Նշան վանքին մէջ եւ այլուր, ինչպէս՝ էրզրումի մօտերը գտնուող Կարմիր վանքին մէջ, կամ էջմիածին ու Սեւան, Մխիթար գրեթէ, ձեռագիրներէ ու վարդապետներէ — որոնք հայ աստուածաբանութեան ուսուցիչներն էին — կ'ամբարէ ամբողջ հարստութիւնը հայ աստուածաբանական աւանդութեան: Հոս հարկ է յիշատակել որ հայ աստուածաբանական այս աւանդութիւնը արդէն իսկ, ինքն իրմէ, «կաթողիկէ» էր, բառին սեղմ իմաստով, այսինքն՝ ընդհանրական: Գիտենք, արդարեւ, թէ Հայերը ինչպէս Մխիթարէ հազար տարի իսկ առաջ՝ հայերէնի թարգմանած էին յոյն եւ ասորի աստուածաբանութեան ամէնէն նշանաւոր երկերը: Մխիթար հպարտ է հայկական աւանդութեամբ, հպարտ՝ որ կը պատկանի այն ազգին, որու հոգամասին վրայ Աստուածաշունչը — Արարատի անունով — կը տեղորոշէ մարդկային կեանքի վերածնունդը՝ ջրհեղեղէն եւ անդրանիկ ծիածանէն ետք, որպէս երաշխիք մարդուն վերստացած խաղաղութեան՝ Աստուծոյ հետ:

Մխիթար կը յօրինէ Աստուածամօր նուիրուած սքանչելի տաղեր: Իր Հայկազեան բառգիրքով կը փրկէ հայրենի լեզուին ու գրականութեան գանձերը: Կը համարձակի դրել՝ իբր առաջին անգամ՝ իր ժամանակի աշխարհաբար լեզուով, եւ կը յօրինէ իր Քրիստոնէականը 1725ին, հնարաւորութիւն ստեղծելով արտայայտուելու ժողովրդական բարբառով՝ նոյնիսկ պարզ հաւատացեալներուն:

Մաքուր հայրենասիրութիւնը կը յայտնուի Աստուծոյ եւ Ս. Եկեղեցւոյ սիրով գերազանցօրէն հրդեհուող սրտերու մէջ: Այսպէս նկատուած է Մխիթար բոլոր Հայերէն, նաեւ էջմիածնի իրենց Կաթողիկոսէն: Էջմիածին զինք կը պանծացնէ իբրեւ վերանորոգիչ հայ լեզուի, որպէս հիմնադիր եւ գլուխ դպրոցի մը՝ որ սկիզբ տուաւ ամէնազգի հետազոտութիւններու եւ հրատարակութիւններու, հայ ժողովուրդին վերաբերող իրադարձութիւններու եւ գրուածքներու: Հայերը Մխիթարի մէջ կը նկատեն սքանչելի ներկայացուցիչ մը ճշմարիտ ու գործօն հայրենասիրութեան եւ ազգասիրութեան, մինչեւ իսկ կասկածներ յայտնելով՝ Հռոմի հանդէպ անոր տածած հաւատարմութեան մասին, կամ կ'անտեսեն այս կէտը, կարծելով թէ մէկը կը մերժէ միւսը: Եւ այս տեսութիւնը կու դայ նոյնանալ Մխիթարի ժամանակակից քաղմթիւ կաթողիկէ Հայերու, լատին միսիոնարներու, եւ յատկապէս՝ Հռոմի Ուրբանեան վարժարանի կարգ մը նախկին աշակերտներու յայտնաբերած վարկածին հետ. ասոնք ուրիշ բան չէին ըներ՝ բայց եթէ ամբաստանել Մխիթարը, որ իր եկեղեցական գրութիւններուն մէջ կը ներմուծէ Հայ Սուրբ Հայրերու տեսութիւններն ու վկայութիւնները՝ դաւանական հարցերու նկատմամբ: Այդ լատիններուն եւ լատինացածներուն համար՝ այս բոլորը չեղում մը կը թուէր այն դրութենէն, զոր սահմանած էին «Միաբանող Եղբայրները», որոնք ամէն բանի մէջ կը զիմէին լատին աստուածաբաններուն, եւ հետեւաբար՝ վտանգաւոր կը համարէին ազգային հեղինակներու հանդէպ ցուցաբերուած շահագրգռութիւնը: Մխիթարի բոլոր բարեկամներն ու թշնամիները կը համաձայնէին հաւաստելու՝ թէ ան երբեք չէ ուզած հրաժարիլ իր հայ ծագումէն, իր ծէսէն, իր արեւելեան նկարագրէն: Մխիթար մինչեւ իսկ կոչուած է «Երկրորդ Լուսաւորիչ Աղգին Հայոց», յատուկ ակնարկով մեծ Սուրբ Գրիգոր Լուսաւորչին:

Ամբողջացնելու համար խճանկարին այս առաջին մասը, թողունք որ Մխիթար ինք յայտնէ իր զգացումները՝ իր ազգին հանդէպ: Ինքն

7. NURIKHAN, էջ 327 յջ:

8. GREGOIRE Card. AGAGIANIAN, La Romanità dell'Abate Mechitar di Sebaste, տե'ս Մ, էջ 432-451, աստ՝ էջ 434:

9. P. GARABED AMADUNI, Mekhitar le Réformateur du monachisme arménien, տե'ս Մ, էջ 175-221, աստ՝ էջ 183: Հմտ. NURIKHAN, էջ 9:

է որ կը խոստովանի, Աստուածաշունչի իր 1733ի հրատարակութեան վերջաբանին մէջ. հրատարակութիւն՝ որուն համար մեծափառ չընորհաւորական մը ստացաւ Բենեդիկտոս ԺԴ. Սրբազան Քահանայապետէն: Մխիթար կը հաւաստէ. «Պօղոս Առաքեալ յանձն կ'առնէ նոյն իսկ նշովուն Քրիստոսէ՝ իր եղբայրներուն եւ ազգակիցներուն համար: Այդ չի նշանակեր թէ անիկա իր ազգը աւելի կը սիրէր քան Քրիստոսը, որմէ ոչ ոք կարող էր զինք անջատել: Բայց կ'ուզէր ցոյց տալ սաստիկութիւնը սիրոյն՝ զոր կը տածէր նաեւ իր ազգին բարիքին համար: Ուստի, բոլոր հոգիով աշխատեցաւ անոր ի նպաստ ու բնաւ չյոգնեցաւ, թէեւ հալածուեցաւ ալ»<sup>10</sup>:

Շատ կարեւոր է սկիզբէն այս բոլորը յստակօրէն նկատի ունենալ. որովհետեւ ա'յսպէս միայն կարող պիտի ըլլանք ըմբռնել Մխիթարի իւրապատուկ միութեան տեսլականին միւս երեսակները: Եւ հիմա կարգն է որ ուրիշ ոսկեհատիկներ ալ աւելցնենք մեր խճանկարին վրայ, դեռ երեք երեսակներ եւս թուելու համար, մեր այս ոգեկոչումի առիթով:

2.- Երկրորդ երեսակը՝ Մխիթարի բացարձակ հաւատարմութիւնն է Հռոմի հաւատքին, զոր ինք կ'անուանէ «Ճշմարիտ հաւատքը Հայոց Հայրերուն»<sup>11</sup>: Մխիթարի եկեղեցաբանութիւնը, ինչպէս որ կը յայտնուի՝ օրինակի համար՝ Մատթէի Աւետարանի իր մեկնութեան մէջ, համակ ջատագովութիւն մըն է Պետրոսի գլխաւորութեան, Հռոմի Քահանայապետին անսխալականութեան եւ գերազանցութեան: Նմանապէս, բացարձակօրէն յստակ է Մխիթարի համար՝ Քաղկեդոնի Ժողովին եւ Քրիստոսի երկու բնութիւններուն վարդապետութեան հարազատութիւնը: Առ ի տեղեկութիւն, հոս կ'ուզէի յիշեցնել՝ թէ այս կէտին շուրջ վիճաբանութիւնը, Հայ Եկեղեցւոյ ծոցին մէջ, արդէն բազմադարեան հանգամանք ունէր, որովհետեւ հայ նուիրակները չէին կրցած Քաղկեդոնի Ժողովին մասնակցիլ, քանի որ իրենց երկիրը այն Ժամանակ գրաւուած էր Պարսիկներէն: Ժողովին վարդապետութիւնը, սակայն, միշտ ընդունուած էր՝ դոնէ Էական կէտերուն մէջ՝ իր ուղղափառ բովանդակութեամբ: Հռոմի հետ երբ յարաբերութիւններն աւելի սերտացան, կարելի եղաւ վարդապետական յստակութեան մըն ալ հասնիլ՝ Քաղկեդոնի բանաձեւին շուրջ, եւ Հռոմի Աթոռին հետ կատարեալ հաղորդակցութեան մը դադափա-

10. NURIKHAN, էջ 23:

11. Հ. ՄԱՏԹԷՈՍ ԵՒ ԴՈՎԻՍԻՍԻ, վարք Մխիթարայ Արքայի (Ձեռագիր), գլ. Թ: Հմմտ. NURIKHAN, էջ 68: (Մխիթար Արքայի դաւանական տեսակէտներուն մասին, տե՛ս Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ-ՆԵՐՍԷՍԵԱՆ, Մխիթար Արքայի հիմնադիր հայ աստուածաբանական վերածնունդին, «Բաղմալէպ» 1949, Թ. 7-12, էջ 245-288, 425-426: ԾԱՆՕԹ. ԹՐԳ.):

րականը կրցաւ յաղթանակել Փլորենտիոյ Ժողովին մէջ, Մխիթարի ծնունդէն երկու հարիւր տարի առաջ:

Փլորենտիոյ Ժողովէն ետք՝ դժուարութիւններ ու կասկածներ երեւան եկած էին: Քիչ առաջ ակնարկեցի Հակարարենորոգումի եկեղեցաբանութեան, որ կը պահանջէր իւրաքանչիւր «ոչ-կաթողիկէ» ի անհատական դարձը. խօսեցայ նաեւ միսիոնարներէն ոմանց այն ճշմարտումին մասին՝ որ չափազանց կը միտէր լատինացնելու եւ ցուցադրելու հայ կղերին ստորակայութիւնը, ուշադրութեան առարկայ դարձնելով՝ օրինակի համար՝ հայ Ծիսարանին ինչ ինչ հատուածները, որոնք բառացիօրէն հակառակ կը թուէին ճշմարիտ վարդապետութեան:

Ասոր իբր հակադրեցութիւն, բազմաթիւ հայ շրջանակներու մէջ զիտակցօրէն շեշտուեցաւ հակաքաղկեդոնականութիւնը՝ որպէս յատկանշօրէն հայեցի միտում մը, ըլլա'յ հեռացնելու նպատակով լատինացումը, ըլլա'յ նաեւ իրենք զիրենք պաշտպանելու համար թրքական կասկածէն՝ թէ Հայերը հետամուտ ըլլային յարելու Պապին վարդապետութեան, որ դարերէ ի վեր չէր դադրած հանդիսանալ Սրբազան Զինակցութեան ու պատերազմի ոգին՝ նոյնինքն Թուրքերու դէմ:

Մխիթար, հաստատելու համար իր հայեցի ինքնութիւնը, պէտք չունէր անշուշտ նման զիրքորոշումներու դիմելու՝ ընդդէմ Հռոմի Եկեղեցիին: Չափազանց յայտնի էր անոր ամբողջական նոյնացումը իր ազգին հետ: Ձեռեղենք, ուրեմն, մեր ոսկեհատիկներու խճանկարին մէջ՝ այս երկրորդ խումբը, ունկնդրելով Մխիթարի իսկ ձայնին, իր հոգեւոր կտակին հետեւեալ անցքին մէջ. «Յատուկ ժառանգութիւն կը թողում իմ բոլոր աշակերտներուս եւ յաջորդներուս, պայմանաւ որ իրենք ալ՝ որքան ատեն որ ողջ են՝ աշխատին ծաւալելու ուղղափառ հաւատքը, առանց կարեւորութիւն ընծայելու այն հալածանքներուն, զոր կրնան կրել՝ ճշմարիտ հաւատքին ընդդիմադիրներէն, ինչպէս նաեւ անոնցմէ՝ որ միեւնոյն հաւատքն ունին...: Կ'աղաչեմ ու կը խնդրեմ Հռոմէական Սուրբ Եկեղեցիէն, որ չյուսահատի իմ ազգիս ըմբոստութենէն, այլ շարունակէ իր սովորական հոգածութիւնը՝ զոր ունի, զայն լուսաւորելու համար ուղղափառ հաւատքին լոյսով»<sup>12</sup>:

3.- Եւ ահա՛ հասած ենք Մխիթարի յղացած միութեան իւրապատուկ տեսլականին երրորդ երեսակին: Ատիկա իր համարձակութիւնն է եւ անայլալուծիւնը փնտռելու ամէնուրեք այն՝ ինչ որ լաւագոյն կերպով կը ծառայէ իրեն, իր առաջադրած նպատակին հասնելու: Մխիթար խորապէս հասկցած էր թեապոնիկեցիներուն ուղ-

12. NURIKHAN, էջ 373:



դուած Ս. Պօղոսի վստեքերը. «Ամէն բան քննեցէք, պահեցէք ինչ որ լաւ է» (Ա. Թես. Ե. 21): Երիտասարդ Մխիթար սկսած էր հոգեւոր եւ իմացական սնունդ փնտռել՝ նախ եւ առաջ՝ հայկական զարգացեալ շրջանակին մէջ, որ այն ժամանակ կը նոյնանար եկեղեցական, եւ աւելի ճիշտ՝ միանձնական միջավայրին հետ: Հոն դտած էր հոգեկան բազմատեսակ հարստութիւններ. բայց հանդիպած էր նաեւ՝ փոխան աստուածաբաններու՝ դործակատարներու. վանականը յաճախ հոմանիշ էր դարձած ծոյլի եւ պարապորդի: Մխիթար վայրկեան միակ տեղիք չտուաւ իր ազդին երես դարձնելու փորձութեան: Կրնար, օրինակի համար, մտնել լատին Կարգի մը մէջ, կամ երթալ ուսանիլ Հռոմ կամ Լիւովի համալսարանը: Այդ պարագային, առանց այլեւայլի, իր առջեւ կրնային բացուիլ եկեղեցական ամենափայլուն ասպարէզներ: Բայց Մխիթար, Տիրոջմէ ներշնչուած, վճռեց ճար փնտռել Հայաստանի դժբախտ վիճակին, օգտագործելով նաեւ ոչ հայկական աւանդութիւններ, այն չափով՝ որով կրնային ատոնք օգտակար ըլլալ իրեն:

Երիտասարդ արեղան, էրդրումի եկեղեցիներէն մէկուն դրան առջեւ, ուրախութեամբ տեսած ու դնած էր Թոմաս Գեմբացիի «Քրիստոսի նմանութեան» գիրքը. մատենիկ մը, որ իր ալ առաջին հրատարակութիւնը պիտի դառնար՝ Կ. Պոլսոյ այն տպարանին մէջ, զոր Ոսկան Վրդ. Ամսդերտամէն Պոլիս փոխադրած էր<sup>13</sup>: Մխիթար իր աշակերտներու ուսումնական շէնքը պիտի բարձրացնէր Հուդոն Ռիպելինի «Տարեքը աստուածաբանութեան» երկասիրութեան վրայ<sup>14</sup>, զոր ինքն իսկ թարգմանած էր, եւ որ այդ թուականներուն Մեծն Ալբերտի կը վերագրուէր: Այս գործը, աւելի ուշ, իր հասարակութեան Վենետիկ փոխադրումէն ետք, լոյս ընծայած առաջին գիրքը պիտի ըլլար:

Իր կրօնաւորական Կարգին հիմնարկութեան մէջ ալ, եւ ի տես հայկական միանձնութեան բարենորոգումի մը, Մխիթար չէր վարաներ պայուանները քաղել արեւմտեան միանձնութեան վերանորոգումի: 1701ի Սեպտ. 8ին, Կ. Պոլսոյ մէջ, Մխիթար կ'ըսէ իրեններուն. «Լաւ գիտէք որ ես ձեզ իմ շուրջս հաւաքեցի ոչ այնպէս՝ ինչպէս սովոր են ընել մերազգի վարդապետները, որոնք յետ դաստիարակելու իրենց աշակերտները եւ անոնց տալու վարդապետական աստիճան, ազատ կ'արձակեն զանոնք, որպէսզի իւրաքանչիւրը երթայ քարոզելու՝ ուր որ աւելի յարմար կը դատէ: Մինչդեռ մենք պէտք ենք կադմել մնայուն Կարգ մը, մեր Ս. Հայրերուն եւ Ս. Անտոնի կանոններուն»:

13. Անդ, էջ 329:

14. P. G. HOFMANN, *Il Servo di Dio Mechitar nel 2° Centenario della sua morte*, տե՛ս «Civiltà Cattolica» 100 (1949), II, էջ 409-420, աստ՝ էջ 412:

րուն համաձայն, եւ աղքատութեան, ողջախոհութեան ու միակ առաջնորդի մը հնազանդութեան ուխտերով»<sup>15</sup>:

Մխիթար իրեններուն կը յարմարցնէր երեք ուխտերը, այնպէս՝ ինչպէս զարգացած էին անոնք Արեւմուտքի մէջ, 1200էն ասդին. բայց կ'աւելցնէր չորրորդ ուխտը՝ առաքելութեան, հաւատարիմ մնալով տակաւին կենսունակ մնացած հայկական աւանդութեան, որուն համաձայն՝ վարդապետները պարտաւոր էին առաքելութեան, ի պաշտօնէ: Իր Հաստատութեան իբր Կանոն կ'ընտրէր Ս. Բենեդիկտոսինը. արեւմտեան կանոն մը. սակայն — կը հաստատէ ինքը — արդէն հնաւանդ՝ մեր ազգին մէջ, թարգմանուած ըլլալով Ս. Ներսէս Լամբրոնացիէն:

Մխիթար գուցէ շատ առաջ կ'երթայ, երբ կը յանձնարարէ իրեններուն որդեգրել ինչ ինչ տօներ, որոնք լատիններու քերականական նոր ձեւերէն ծագում առած էին, ինչպէս են Յիսուսի սուրբ անուան, Աստուածամօր անուան եւ Ս. Յովսէփի տօները<sup>16</sup>: Շատ առաջ կ'երթայ գուցէ, երբ կը յանձնարարէ իրեններուն՝ որ փոխեն սուրբ պատարագը մատուցանելու կերպը, ըստ այնմ որ կը գտնուին արեւմտեան կամ թէ հայկական հողի վրայ: (Բայց ինք բոլոր եկեղեցիներուն մէջ՝ ինքզինքը իբր իր տունը կը զգար, եւ կ'ուզէր պատարագը մատուցանել տեղական սովորութիւններուն համաձայն, իրաւացիօրէն խորհելով թէ հայ կամ հռոմէական ծէսերը իրարու հակառակ չէին, այլ՝ զուգահեռ):

Մխիթար գուցէ շատ առաջ կ'երթայ, բայց այնքան վստահ է իր հայեցի ինքնութեան վրայ, այնքան համոզուած է թէ Հայոց աւանդական հաւատքը զերծ է մոլորութիւններէ, այնքան արմատացած է ընդհանրական հաւատքին իսկութեան մէջ, որ բնաւ երկիւղ չունի առնելու լաւագոյնը՝ միակ եկեղեցիին մէջ գոյութիւն ունեցող բոլոր աւանդութիւններէն:

Մխիթար կ'օգտուի արեւմտեան եւ արեւելեան աւանդութիւններուն լաւագոյնէն՝ ի տես իր մեծ նպատակին. բարենորոգում հայ միանձնութեան եւ ամբողջ Հայ Ազգին: Ճիշտ է որ ան՝ այդ ժամանակներուն՝ հայ միանձնութեան միակ բարենորոգիչը չեղաւ, բայց իր բարենորոգումը միակը եղաւ որ վերապրեցաւ, որովհետեւ իրադործուած էր մեծ լայնախոհութեամբ: Կորնթոսի Արքեպիսկոպոսը կը գրէր 1709ին. «Մխիթար Աբբայի Սահմանադրութիւնները՝ ձեւա-

15. NURIKHAN, էջ 110:

16. Հմտ. AMADUNI, յիշ. գործ, էջ 212: NURIKHAN, էջ 110: (Մխիթար Եւրոպա դալով, կը պարտաւորուէր որդեգրել տեղական կարգ մը տօներ ու ծիսական սովորութիւններ, որոնք այն ժամանակ պարտադիր էին Արեւմուտքի մէջ. սակայն ան երբեք չզոհեց հայկական բնիկ տօները, պահպան ու սովորութիւնները, Մխիթարութեան հիմնարկումի առաջին իսկ օրերէն: ՄԱՆՈԹ. ԹՐԳ.):

կերպով չեն, ինչպես ուրիշ շատ կարգերու մէջ, այլ Հայ Վարդապետները զանոնք ճշտիւ կը պահեն, եւ այնքան օրինակելի կենցաղ մը կը վարեն, որ եթէ բոլոր լատիններն ալ ասոնց խմորը ունենային՝ կարելի էր մեծագոյն օգուտ մը յուսալ: Տա՛ր Աստուած որ մեր լատիններն ալ, բոլոր, միեւնոյն խմորէն ըլլային»<sup>17</sup>:

1907ին, Հայ արքեպիսկոպոս մը՝ Մելիք-Թանգեան վը դրէր, իր կարգին. «Ժամանակը պահանջում է որ վանքերը եւ կուսանոցները կա՛մ լինին Վենետիկի եւ Վիեննայի մենաստանների նման՝ ուսման եւ դրականութեան կենտրոն, կա՛մ էջմիածնի նման ուսումնարանական-վարչական կենտրոն»<sup>18</sup>:

Խճանկարին այս երրորդ երեսակը կ'ուղէի ամբողջացնել նկարադրելով Մխիթարի Միարանութեան տեսլականը՝ այն խօսքերով՝ զոր ինք Հիմնադիրը, 1701ին, Կ. Պոլսոյ մէջ, ուղղեց իր աշակերտներուն. «Մեր նպատակը օգնել է Աղլին, որուն մէջ ուղղափառ հաւատքին ծանօթութիւնը աղաւաղուած է, եւ ասոր հետեւանքով... Հռոմի սուրբ մայր Եկեղեցիին հետ հաղորդակցութիւնը նուազած: Մեր գլխաւոր նպատակը պիտի ըլլայ վերստին կենդանացնել զայն, եւ հոգիներու փրկութիւնն ապահովել»<sup>19</sup>:

4.— Եւ ահա չորրորդ ու վերջին մասը՝ վերակազմելի խճանկարին, զոր կը փութանք ներկայացնել՝ մեր տրամադրութեան դըրուած այս կարճ ժամանակամիջոցի ընթացքին: Նկատի պիտի առնենք Մխիթարի կեցուածքը «յաստուածայինս հաղորդակցութեան» կնճռոտ հարցին նկատմամբ, որու մասին Ս. Աթուռ բացայայտօրէն իր կարծիքը խնդրած է 1718ի Սեպտեմբերին:

Ինչպէս գիտենք, Թուրք վարչական դրութեան համաձայն, քրիստոնեաները՝ իրենց քաղաքացիական վիճակին բոլոր ձեւակերպութիւններուն համար՝ ենթակայ չէին մահմետական իշխանութիւններուն, այլ կղերն էր որ կը բռնէր քաղաքացիական վիճակին արձանադրութիւնները. մկրտութիւն, ամուսնութիւն (զայն օրհնելու իշխանութեամբ), եւ մահ (թաղումի իրաւունքով): Կարգաւորութիւն մըն էր ասիկա, որ մասամբ բիւզանդական կայսրութենէն ժառանգութիւն էր մնացած ու Հայերուն շնորհուած, եւ անոնցմէ ալ առաջ՝ Յոյներուն: Կղերը այս իրաւասութիւնները կը դործադրէր՝ Պատրիարքին հսկողութեան տակ: Հայերը Կ. Պոլսոյ մէջ ունէին իրենց Պատրիարքը, ինչպէս Յոյները՝ իրենցը:

Ըլլա՛յ կառավարական այս կարգադրութեամբ, ըլլա՛յ նաեւ անոր համար որ Մխիթար համոզուած էր թէ Հայ Եկեղեցին Քաղկեդոնի

ճշմարիտ հաւատքին մէջ ըլլար, իր աչքին՝ բոլոր Հայերը միակ Եկեղեցի մը կը կազմէին: Թէպէտեւ Կալանոսի հետեւեալ նկատողութիւնը, 1658էն, իբրեւ քննադատութիւն մը կը հնչէ. «Բոլոր Հայերը միասին կ'աղօթեն միեւնոյն տաճարներուն մէջ՝ փառն, նոյն լիակ երբ մէկը միւսին հաւատքի դաւանանքը չի վաւերացներ: Եւ սակայն ո՛չ ալ կարելի է ըսել թէ Հայոց Եկեղեցին երկուքի բաժնուած ըլլայ, որոնցմէ մէկը կաթողիկէ ըլլայ, իսկ միւսը՝ հերետիկոս»<sup>20</sup>:

Լատին միսիոնարներու միջամտութեան ծաւալումով, այս «ճկուն միութիւնը» — եթէ կարելի է այսպէս որակել — փոխուած էր: Տրիտենդեան Բարենորոգումով՝ հիմնական վերատեսութեան մը ենթարկուած էին արեւմտեան Եկեղեցիին յօրինուածքները, այդ Բարենորոգումին յատուկ եկեղեցաբանութեան նոր շեշտաւորումներով: Ուստի, արեւմուտցի միսիոնարները՝ յօրինուածային հետեւողականութեամբ՝ չէին կրնար չյարմարցնել Հայ Եկեղեցիին հանդէպ տաճած իրենց յարաբերութիւնները, մինչեւ այն ատեն աւելի ճկուն, եկեղեցաբանական այդ աւելի արդիական ուրուագծին եւ անկէ բխող կանոնական եւ իրաւական չըջածիրին: Այս չըջածիրին մէջ — ու երկդիմի ձեւով — Արեւելքի յարմարցուցին կանոններ՝ որոնք ծնունդ առած էին գործադրուելու համար Արեւմուտքի մէջ, ուր կացութիւնը բոլորովին տարբեր էր:

Այսպէս, զարգացաւ այն համոզումը՝ թէ գոյութիւն ունենային վարդապետական տարբերութիւններ, թերեւս աստուածաբանօրէն ալ արդարացնելու համար բաժանումներ՝ որոնք ծագած էին ոչ-աստուածաբանական ազդակներէ: Հայ ժողովուրդէն մաս մը, համոզուելով լատին միսիոնարներու քարոզութեան, հետզհետէ անտանելի նկատեց Հայկական եկեղեցիները յաճախել, քանի որ հոն նդովքներ կ'արձակուէին Քաղկեդոնի ժողովին դէմ: Այդ բոլորին հետեւանքը սա եղաւ որ, հուսկ, անոնք Հայկական եկեղեցիները յաճախէին՝ միայն քաղաքացիական վիճակի պարտականութիւնները կատարելու համար. մկրտութիւն, սրակ, թաղում. եւ նոյնիսկ յաճախ լաւ ընդունելութիւն ալ չգտնէին, որովհետեւ տարուան ընթացքին երբեք տեսնուած չէին եկեղեցին:

Յաճախ, լատին միսիոնարներն էին որ արգելած էին իրենց՝ յաճախել Հայկական եկեղեցիները, մահուչափ մեղքի կապանքով: Այսպէս, Կ. Պոլսոյ եւ ուրիշ մեծ կեդրոններու մէջ, շատ Հայեր լատիններու եկեղեցիներուն մէջ վերջացան: Իբր լատին՝ կը վայելէին աղատութեան երաշխիքներ եւ արեւմտեան դեպքաններուն հովանաւորութիւնը:

20. CL. GALANO, Conciliationis Ecclesiae Armenae cum Romana, ex ipsis Armenorum Patrum et Doctorum testimoniis, Romae 1658, tom. I, Assertio II § VIII: Հմտ. NURIKHAN, էջ 60 եւ 69:

17. REDIGONDA, յիշ. գործ, էջ 110:

18. Հմտ. AMADUNI, յիշ. գործ, էջ 218 յջ:

19. Տե՛ս վերեւ, ծանօթ. 16:

Այս բոլորը լաւ ընդունելութիւն չգտաւ հայ կղերին կողմէ, որ այս շարժումին մէջ կը տեսնէր ո՛չ միայն հայութեան ուրացումը, այլ նաեւ տնտեսական կորուստ մը: Բայց ոչ ալ լաւ ընդունելութիւն գտաւ Թուրքերուն կողմէ, որոնք շատ քիչ շահագրգռուած էին, կամ բնաւ իսկ, երկու խմբակներուն դաւանական տարբերութիւններով. բայց մտահոգ էին՝ տեսնելով որ հայ կաթողիկէները հակառակ կը դործէին կայսրութեան օրէնքներուն. օրէնքներ՝ որոնք կը պարտադրէին բոլոր Հայերը ենթարկուելու իրենց Պատրիարքին հոգեւոր ու վարչական առաջնորդութեան: Ասկէ զատ, Թուրքերը կը կասկածէին որ լատին ամէն կրօնական ձեւի տակ՝ արեւմտեան քաղաքական ազդեցութիւն մը ըլլար:

Այս կացութեան մէջ, պէտք է զարմանալի թուի որ, 1701ին, հալածանքներ չղծադրուէին այն Հայերուն դէմ՝ որոնք իրենք զիրենք Պապին հաւատարիմ կը դաւանէին: Կ. Պոլսոյ Առաքելական Փոխանորդը կը հաստատէր, 1700ին, թէ դանազան հարցերու մէջէն այն որ ամէնէն աւելի զիրենք կը նեղէր՝ անտարակոյս Հայ Եկեղեցիին հարցն էր<sup>21</sup>: Նոյն քաղաքի Վեղարաւոր Հայրերու Մեծաւորն ալ կը դէմ չէր նոյն տարին. «Այս ազգը այնպէս բաժնուած է, որ չկայ միջոց մը զոր չգործածէ՝ ինքզինքը կործանելու համար: Եւ ստոյգ է որ կաթողիկէներն ալ, որոնք այսօր կը բաժնեն ամէնէն վայրագ բռնութեան լուծին տակ, իրենց կարգին՝ պիտի ընկճեն իրենց հակառակորդները, երբ ժամանակները աւելի նպաստաւոր ըլլան»<sup>22</sup>:

Այս խռովակոծ տարիներուն է՝ 1700ի Յուլիսին՝ որ Մխիթար կը ժամանէ Կ. Պոլիս եւ կ'ընդունուի իբր ազգին ամէնէն երեւելի վարդապետներէն մէկը<sup>23</sup>: Մխիթար իսկոյն կը կատարէ հաշտարար դեր մը: Կը հանդարտեցնէ հայ երկու խմբակներուն միջեւ ծագած ոչ թեթեւ ընդհարում մը, որուն առիթ տուած էին լատին եկեղեցիները յաճախող Հայոց կողմէ անարդանքներ՝ ընդդէմ ինքնավար խմբակի քահանաներուն:

Բայց այն մեծ համարումը, զոր ունէր Մխիթար իր ազգին աւանդութեան մասին, զինք աւելի առաջ կը մղէ: Ան համոզուած էր՝ թէ իր ժամանակի Հայ Եկեղեցիին նկատմամբ, իր ամբողջութեան մէջ առած, կարելի չէր խօսիլ կերպական բաժանումի մը մասին: Ան լաւ տեղեակ էր թէ քանի՜ Կաթողիկոսներ կամ ուրիշ բարձրաստիճան եկեղեցականներ բացայայտօրէն իսկ արտայայտած էին իրենց

21. ODOARDI, յիշ. գործ, էջ 69:

22. P. CONSTANT DE CRAON, Le projet d'Union de 1701 entre les Arméniens Catholiques et les Arméniens dissidents d'après la Correspondance Hyacinthe-François, Capucin, Supérieur de Saint Louis de Péra, տե՛ս Մ, էջ 47-67, աստ՝ էջ 50 ծանօթ. 9:

23. ODOARDI, յիշ. գործ, էջ 78:

յարումը Հռոմի: Միւս կողմէ, դիտակից էր նաեւ թէ շատեր այսպիսի բան մը չէին ըրած, եւ կային հոսանքներ՝ որոնք ուժգնօրէն կ'ընդդիմանային Հռոմի հետ հաղորդակցութեան: Բայց իրողութիւնը այն էր՝ որ ինք որեւէ պատճառ չէր տեսներ այս վերջիններս աւելի հանգամանալից նկատելու քան առաջինները:

Մխիթար համոզեց, ուրեմն, Առաքելական Փոխանորդը՝ Արքեպիսկոպոս Գասպարինին՝ կաթողիկէ դիւանագէտները, լատինասէր եւ ինքնավար Հայերը՝ դաշնագիր մը պատրաստելու, որ մէջտեղէն վերցնէր հայ կաթողիկէներու դէմ մղուած հալածանքներու թէ՛ պատճառները եւ թէ՛ նոյն ինքն հալածանքները: Պիտի ուղէի աւարտել մեր խճանկարին այս չորրորդ եւ վերջին երեսակը՝ քանի մը մէջ՝ բերումներ կատարելով այս դաշնագրէն<sup>24</sup>:

«Մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի, ամենասուրբ Կոյս Աստուածածնի եւ Ս. Գրիգոր Լուսաւորչի անունով, Աստուծոյ մեծազոյն փառքին եւ Հայ ազգին յաւիտեական փրկութեան ու անդորրութեան համար, խաղաղութիւնը պիտի հաստատուի այսօր եւ ցմիշտ ընդմէջ այն Հայերուն՝ որ լատին եկեղեցիները կը յաճախեն, եւ անոնց՝ որ հայկական եկեղեցիները կը յաճախեն: Այս նպատակով կը դրուին հետեւեալ պայմանները, բացատրուած՝ յաջորդ յօդուածներուն մէջ.

Ա) Հայ եկեղեցիները յաճախող Հայերուն կողմէ.

1. Որ լատին եկեղեցիները յաճախող Հայերէն հաւատքի որեւէ դաւանութիւն պիտի չպահանջեն.
2. Որ լատին եկեղեցիները յաճախող Հայերէն պիտի չպահանջեն որեւէ նզովք արձակել ընդդէմ Պապին, Հռոմի Եկեղեցիին, Ս. Լեւոնի կամ Քաղկեդոնի Ժողովին.
3. Որ Հայ եկեղեցիներուն մէջ, տարուան ընթացքին որեւէ ատեն, երբեք նզովք պիտի չարձակուի՝ ինչպէս էր նախապէս՝ Ս. Լեւոնի եւ Քաղկեդոնի Ժողովին դէմ:

Բ) Լատին եկեղեցիները յաճախող Հայերուն կողմէ.

1. Որ հայկական եկեղեցիները պիտի յաճախեն.
2. Որ տէրուական տօները եւ մանաւանդ տարուան մեծ տօները՝ հայկական եկեղեցիներուն մէջ պիտի կատարեն, եւ հոն պիտի խոստովանին՝ իրենց ընտրած քահանային, եւ Ժողովուրդին հետ պիտի մերձենան սուրբ Հաղորդութեան, ինչպէս որ սովորութիւն է.
3. Որ հայ ծէսին պիտի հետեւին, մանաւանդ իրենց ծէսէն պարտադրուած ծովերուն եւ պահերուն գործադրութեան մէջ:

24. DE CRAON կը մէջբերէ Քրիստոսեան բնագիր մը, յիշ. գործ, էջ 54, ծանօթ. 29:

9) Ասկէ գատ, համաձայն եմ հետեւեալ կէտերուն մէջ.

1. Ով որ ուրիշ մէկը իբր հերետիկոս որակէ՝ պիտի պատժուի.

2. ....

3. Երկու կողմերն ալ, համաձայնօրէն, հաշտութեան ներկայ դաշնագրէն ստորագրուած ու վաւերացուած օրինակ մը սխիտի ղրկեն Հաւատոյ Տարածման Ս. Ժողովին, օրինակ մըն ալ Երեւան՝ Հայոց մեծ Հայրապետին, որպէսզի ցմիշտ անփոփոխ ու հաստատուն պահուի...»:

Հաշտութեան այս դաշնագիրը, զոր պատրաստեց Մխիթար, մընաց ապարդիւն, լատին միսիոնարներու խրոխտ հակառակութեան հետեւանքով՝ ընդդէմ իրենց Եպիսկոպոսին: Որովհետեւ ատիկա հակառակ է, ըսին անոնք, աստուածային իրաւունքին: Որովհետեւ չեն ուզեր կորսնցնել իրենց եկեղեցիները յաճախել սկսած Հայոց ողորմութիւնները, ըսաւ Արքեպիսկոպոսը՝ համակերպած, եւ աւելցուց. «Ինչ որ ամէնէն ցաւալին է ամբողջ այս վշտալի կացութեան մէջ, որուն այսօր ականատես կ'ըլլանք, տխուր հետեւանքներն են այն հնարաւորութիւններուն, զոր դաշնագրին ընդդիմադիրները յաջողեցան ունենալ՝ խափանելու համար ծրագրի մը իրագործումը, որ կըրնար արդեւ ըլլալ տեղի ունեցած բոլոր խժոժութիւններուն...: Ես պիտի չզաղրիմ հաստատելէ՝ որ հարիւր միսիոնար, հարիւր տարուան ընթացքին, պիտի չյաջողին դարմանել այն չարիքը՝ զոր հաւատքը կրած է եւ պիտի շարունակէ կրել իրենց յանցանքով»<sup>25</sup>:

Ամէնէն տխուրը այս ցաւալի հետեւանքներուն՝ յարաճուն դարդացումը եղաւ բաժանումի կողմնակից բանաձեւին, որ իր լրումին հասաւ 1742ին, կաթողիկէ Հայոց համար անջատ Պատրիարքութեան մը ստեղծումով: Բայց Մխիթար չծածկեց իր վերապահութիւնը՝ ի լուր այդ իրադարձութեան. եւ արտայայտեց զայն իր անձնական մէկ թղթակցութեան մէջ, նոյնիսկ իր մահէն քիչ ժամանակ առաջ<sup>26</sup>:

Հոս կը լրանայ մեր այս համառօտ ուղեւորութիւնը՝ Մխիթարի դարաշրջանին ընդմէջէն. կ'աւարտի նաեւ մեր խճանկարը, զոր շատ աւելի ճիշդ պիտի փափաքէինք ներկայացնել, նկարագրելու համար, մանրամասնութիւններու աւելի առատ յաճախութեամբ, միութեան այն նախատիպը՝ զոր երազեց Մխիթար, Եկեղեցւոյ միութեան ի նըպաստ իր այնքան սխրալի նուիրումին մէջ:

25. Ամդ, էջ 65 եւ յջ.: (Վերոյիշեալ հաշտութեան դաշնագրի պատրաստութեան մէջ, անտարակոյս, մեծ դեր ունեցած է ինչպէս Վրդ. Առաքելեան, որ այդ օրերուն՝ խոշոր համբաւ կը վայելէր Կ. Պոլսոյ մէջ. - Ծնթ. ԹրԳ.):

26. Նամակ Թիւ 712:

## ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՄԵԻԹԱՐԻ ՏԵՍԱԿԵՏՆԵՐՈՒՆ ԱՅԺՄԵԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԻՈՒԹԵԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Հիմա կը մնայ որ պատասխանենք այն հարցումին՝ զոր դրինք մեր այս բանախօսութեան սկիզբը: Ի՞նչ կրնանք սորվիլ մենք այսօր Մխիթարի այս միութեան դադափարականէն: Եւ, իր ծննդեան 300ամեակին, ի՞նչպէս պէտք է տեսնել այդ դադափարականը՝ աստուածաբանութեան ու եկեղեցւոյն կեանքի յաջորդական յեղաշրջումին լոյսին տակ:

Քիչ առաջ ըսինք՝ թէ Մխիթարի դործը զարգացած է այնպիսի դարու մը եւ այնպիսի միջավայրի մը մէջ, ուր կու գային խառնուիլ այլազան հոսանքներ. նախ՝ անոնք որ քրիստոնէութեան հնագոյն շրջաններէն կը ծագէին, ապա աւելի նորեր՝ որոնք կը պատկանէին իր հոգեւորքն ապրող Միջնադարուն կամ իր ծաղկումը աւարտած քրիստոնէութեան դադափարականի մը. եւ հոսսկ անոնք՝ որ յատուկ էին Հակաբարենորոգումի առոյգ ուժականութեան: Այս բոլորը, այդ դարուն, կը խառնուէին տեսակ մը յորձանուտի մէջ:

Այսօր, հակառակ երեւոյթներուն, ջուրերը դրեթէ բոլորովին հանդարտած են: Վերանորոգումի եւ խորացումի այն մեծ ճիւղը, որ դարէ մը ի վեր կ'ոգեւորէր Կաթողիկէ Եկեղեցին, իր մէջ վերստին կը համակէ, խորապէս ու կենսունակօրէն, իր դոյութեան այն բոլոր տարածքը՝ որ կազմուած է արեւելեան մեծ աւանդութեան: Այս բոլորը բողբոջած է Վատիկանեան Բ. Ժողովին մէջ: Հոս, այդ ճիւղերը դուրս իրենց արտայայտութիւնը, եւ անկէ ծաւալեցան ապա - նոր մղումով ու նոր ուժականութեամբ - բովանդակ Եկեղեցւոյ վրայ:

Ինչ կը վերաբերի Եկեղեցւոյ միութեան, այս յեղաշրջումը կարելի է յատկանշել իբրեւ խոր ու ներուժական վերադարձ մը դէպի աղբիւրները, իբրեւ վերարժէքաւորում քրիստոնէական աւանդութեան ամէնէն հարազատ հոսանքներուն: 1969ի Հոկտեմբերին, Հռոմի մէջ կազմակերպուած Եպիսկոպոսական Սիւնհոդին, Ջակրեպի այն ատենուան Եպիսկոպոսը՝ Կարդ. Սեփեր, այն ղեկուցադրին մէջ՝ որուն պատրաստութիւնը իրեն յանձնուած էր՝ կը խորհէր թէ կարելի է Վատիկանեան Բ. Ժողովի արդիւնները, եկեղեցաբանական դետնի վրայ, համադրել Հաղորդակցութեան դադափարի վերարժէքաւորումին մէջ, որպէս բնորոշիչ Եկեղեցւոյ<sup>27</sup>:

27. Documentation Catholique LXVI (1969), էջ 960 յջ.:

Ժողովին յաջորդող տարիներուն նշուած յեղաշրջումը հաստատած է Կարգ. Սեփերի այս դատաստանը: Իմ համոզումս այն է որ դէպի միութիւն առաջնորդող ճամբուն ապագան կը կայանայ, մեծ մասամբ, անոր մէջ՝ որ Կաթողիկէ Եկեղեցին զարգացնէ Հաղորդակցութեան եկեղեցաբանութիւն մը, իր բոլոր տարածքներով ու ներառումներով:

Հնարաւոր չէ հիմա հոս ընդլայնել այս նիւթը, զոր կատարած եմ ուրիշ առիթով<sup>28</sup>: Պիտի ուզէի միայն ցոյց տալ արագօրէն թէ ինչպէս այս նոր՝ բայց խորապէս աւանդական շրջանակին մէջ, Մըխիթարի գործին բնորոշիչ տարրերը կրնան գտնել իրենց տեղը, իրենց իրականացումը, իրենց դրոմը, Եկեղեցւոյ բովանդակ մեծ աւանդութեան եւ յատկապէս արեւելեան աւանդութեան ի նպաստ:

Միւխիթարի մէջ շատ սուր էր զգայնութիւնը Եկեղեցւոյ ընդհանրականութեան, բայց միեւնոյն ատեն՝ ան խորապէս արմատացած էր ի՛ր ալ սեպհական աւանդութեան, հայ քրիստոնեայի իր ինքնութեան մէջ: Հաղորդակցութեան եկեղեցաբանութիւն մը, այնպէս՝ ինչպէս մեր օրերուն Կաթողիկէ Եկեղեցին զայն վերադարձ եւ վերջապէս այժմէութեան մէջ դրած է, կը վերարժէքաւորէ տեղական Եկեղեցին, անոր աւանդութիւնը, անոր իւրայատուկ անձնականութիւնը<sup>29</sup>: Բայց միաժամանակ, անբաժանօրէն եւ միեւնոյն աստիճանով, այս եկեղեցաբանութիւնը կը ստորադէտ տեղական Եկեղեցիներու միջեւ հաղորդակցութեան հարկաւոր կապը: Այս հեռանկարին մէջ, Եպիսկոպոսին դերը կը վերստանայ իր ամբողջ կարեւորութիւնը եւ կրկին դուրս կը ցայտէ: Ա՛յն է Հաղորդակցութեան ղօղը. ի՛նքն է որ պէտք է բանայ իր Եկեղեցին՝ միւս տեղական կամ մասնական Եկեղեցիներուն բոլոր հարստութիւններուն դիմաց, ընդհանրական հաղորդակցութեան մէջ: Ի՛նքն է որ կը ներկայացնէ միաժամանակ իր Եկեղեցին եւ իր ուրոյն աւանդութիւնը՝ միւս տեղական Եկեղեցիներու ծոցին եւ ընդհանրական հաղորդակցութեան մէջ:

Այս հեռանկարին դիմաց, այլեւս խնդրոյ առարկայ չի կրնար ըլլալ այն պարագան՝ ուր Եկեղեցի մը ուղէ իր մէջ ձուլել ուրիշ մը, ուղէ իր յատուկ մշակոյթը կամ աւանդութիւնը պարտադրել ուրիշ Եկեղեցի մը. այլեւս անըմբռնելի կը դառնայ Արեւելքի լատինացումը: Ընդհակառակն, հոս՝ տեղ կրնայ գտնել միայն տեւական ու խորունկ ներփոխանցում մը, որպէսզի իւրաքանչիւրը՝ իր ձեւով, իրեն յատուկ ոճով եւ իր ուրոյն աւանդութեան համաձայն, կարեւորապատասխանել մեր օրերու նոր պահանջներուն, հաւատքի եւ խոր-

28. Proche Orient Chrétien, XXV (1975), էջ 1-15:

29. ՊիՈՍ ԺԲ. ՊԱՊ, Կոնդակ «Summi Pontificatus», AAS 31 (1939), էջ 428 ըջ.:

հըրդական կեանքի հաղորդակցութեամբ անոր հետ՝ որ Պետրոսի յաջորդն է:

Հաղորդակցութեան եկեղեցաբանութեան հետեւանքներէն մէկն է՝ վերադիտակցումը Եպիսկոպոսութեան համահաւաք կազմին<sup>30</sup>: Եթէ Եկեղեցին հաղորդակցութիւն մըն է տեղական Եկեղեցիներու, Եպիսկոպոսները կը կազմեն համահաւաք դաս մը: Եթէ Հռոմի Եկեղեցին է այն Եկեղեցին՝ որ կը նախագահէ Եղբայրութեան, ընդհանրական հաղորդակցութեամբ, ուրեմն՝ անոր Եպիսկոպոսն է որ կը նախագահէ Եպիսկոպոսներու համահաւաք դասին: Հռոմի Եպիսկոպոսին դերը՝ ի սպաս ընդհանրական Եկեղեցւոյ միութեան՝ կը զգենու նոր տարածքներ, աւելի խոր ու պահանջկոտ: Կարելի է թուել քաղմաթիւ օրինակներ, ցոյց տալու համար թէ ինչպէս քրիստոնեայ աշխարհին մէջ, եւ նոյնիսկ Կաթողիկէ Եկեղեցւոյ շրջապատէն շատ անդին, հետզհետէ կը քողազերծուի միութեան այս սպասարկութեան հարկաւորութիւնը՝ ընդհանրական Եկեղեցւոյ մակարդակին վրայ: Նկատի առէք, օրինակի համար, Միացեալ Նահանգներու մէջ՝ Կաթողիկէներու եւ Լուտերականներու միջեւ տեղի ունեցած խօսակցութիւններուն հետեւանքները, եւ կամ այն եղբակցութիւնները՝ որոնց դեռ վերջերս յանդեցաւ Կաթողիկէ Եկեղեցւոյ եւ Անգլիկան Եղբայրութեան միջեւ կազմուած Միջադրային Յանձնախումբը: Նկատի առէք այն նամակները, զոր Տիեզերական Պատրիարք Դեմետրիոս Ա. ուղղեց Պօղոս Զ. Պապին՝ 1975ի Դեկտեմբերին եւ այս տարուան Յունիսին: Նկատի առէք նաեւ հանդիպումներու յաճախութիւնը՝ Պապին եւ Արեւելքի ու Արեւմուտքի զանազան Եկեղեցիներու եւ եկեղեցական Համայնքներու պետերուն: Այս շրջածիրին մէջ, եւ մասնաւորապէս կերպով, պիտի ուզէի յիշատակել նաեւ հանդիպումները Հայ Եկեղեցւոյ Կաթողիկոսներուն հետ: Այս բոլորէն կը հետեւի թէ խորունկ փոփոխութիւն մը տեղի ունեցած է:

Եթէ Կաթողիկէ Եկեղեցին կը վերագտնէ ու կը վերահամակէ իր արեւելեան բաղադրիչը, Արեւելքն ալ կը վերաճանչնայ ու կը վերագտնէ՝ իր կարգին՝ արեւմտեան բաղադրիչը: Եւ ասիկա կրնայ կատարել ամենայն ազատութեամբ, այն ազատութեամբ՝ որ կը բխի ապահով ինքնութենէ մը, վերստացուած վստահութենէ մը, որովհետեւ ապահով ենք՝ թէ դիմացինը մեզ կը ճանչնայ ու կը յարգէ: Արեւելք եւ Արեւմուտք կրնան վերստին իրար գտնել՝ իբրեւ քոյր Եկեղեցիներ, յգեւորուած այն խորունկ տենչանքէն՝ վերահաստա-

30. Եպիսկոպոսներու համահաւաք դաս յորդորումը կը համապատասխանէ Collegium episcoporum եզրին, որ այնքան յաճախակի գործածուած է Վատիկանեան Բ. Ժողովի գործերուն մէջ, Collegialitas եւ Collegialis եզրներու կողքին: Հմտ. այս մասին՝ վաւերաբույժքեր վատիկանեան Բ. Տիեզերական Ժողովի, տպ. Վենետիկ - Ս. Ղազար 1967, էջ 13 (ԾԱՆՕԹ. ԹՐԳ.):

տելու ամբողջական հաղորդակցութիւնը հաւատքի, խորհրդական կեանքի եւ նուիրապետական զօդերու:

Ակնյայտ է թէ այս բոլորը կը պահանջէ որ այսօրինակ եկեղեցաբանութիւն մը վերածուի թանձրացեալ դործելակերպի: Անհրաժեշտ է դործնական ներդրումներ հանել՝ քոյր եկեղեցիներ ըլլալու իրողութենէն: Պէտք է դործնականօրէն ջնջել անցեալի հակամարտութեան եւ մրցակցութեան թողած բոլոր հետքերը, առաջ մղելու համար՝ եկեղեցւոյ կեանքին ամէն մակարդակի վրայ՝ դործակցութիւն մը, այսինքն՝ արթուն եւ հանճարեղ եղբայրսիրութիւն մը, որ պէտք է կերպերն ու հնարաւորութիւնները դառնէ՝ վարժութենէն եւ ունակութիւններէն անդին:

Ասիկա, սակայն, կը պահանջէ խորունկ դարձ մը: Եւ արդէն Վատիկանեան Բ. Ժողովը ջերմօրէն հաստատած է՝ թէ սրտի դարձն է հիմը համամիութենական յանձնառութեան: Այս կէտին մէջ ալ՝ Մխիթար խորհրդածոթեան արժանի օրինակ մը կ'ընծայէ: Ձեր Միաբանութեան նշանաբանը չի՞ հրաւիրեր արդեօք ըլլալու «Վարդապետ ապաշխարութեան»: Ու Մխիթար, էրզրումի Երեւելիներուն ուղղած իր նամակին մէջ չէ՞ր հաստատեր միթէ այսպէս. «Մենք ձեզ կը սիրենք, որովհետեւ մեր բարեկամներն էք: Բայց աւելի կը սիրենք անոնք՝ որովհետեւ մեր հակառակորդներն են: Ձեզի կը ծառայենք, բայց աւելի՝ անոնց: Ձեզի համար կ'աղօթենք, բայց աւելի՝ անոնց համար: Այսպէս կ'աճի, այսպէս կը զարգանայ ուղղափառութիւնը, այսպէս կը դործադրուի եղբայրսիրութեան պատուէրը: Դուք ալ նոյնպէս ըրէք»<sup>31</sup>:

Բարեբախտաբար դերադանցած ենք անցեալի այն դժբախտ կացութիւնները՝ երբ քրիստոնեաներու միջեւ հակառակորդներու մասին կը խօսուէր: Բայց Մխիթարի հոգին կը մատնանչէ ուղին եւ կը դրդէ զարկ տալու այս դործակցութեան՝ եղբայրական ու անշահախնդիր ճշմարիտ սիրոյ հոգիով: Ու Մխիթարի յանձնարարած այս վերաբերումին մէջ արդէն լաւ ուրուագծուած կը տեսնուի՝ թէ եւ տարբեր պարագաներու տակ՝ ամբողջ այն փոխադարձ ներողամտութեան հոգին՝ որ ոգեւորեց Վատիկանեան Բ. Ժողովը, եւ որ պէտք է շարունակէ ներշնչել մեզ, այն անխուսափելի ընդհարումներու ընթացքին, որոնք դէպի ամբողջական միութիւն առաջնորդող ճամբու երկայնքին կրնան ներկայանալ, դարերով իրարմէ բաժնուած ու մերթ իրարու դէմ դիրք բռնած խմբակներու միջեւ:

Միւս կողմէ՝ յստակ է որ Վատիկանեան Բ. Ժողովը, մանաւանդ Համամիութեան վճռադրին մէջ, լիովին կը վաւերացնէ Մխիթարի որդեգրած վարմունքը հանդէպ այն եղբայրներուն՝ որոնց հետ ամ-

բողջական հաղորդակցութեան մէջ չէր գտնուեր: Ինչն էր որ իրաւունք ունէր՝ անոնց աւանդութեան եւ ծիսական արտայայտութիւններուն հանդէպ սնուցած իր գնահատանքով: Մինչ իր հակառակորդներուն կեցուածքը՝ մենք այսօր հաղիւ թէ կրնանք ըմբռնել:

Հուսկ՝ հետաքրքրական է կրկնել հոս, որ Մխիթար, 1701ի Սեպտ. 8ի միաբանական ընդհանուր ժողովին առիթով, կը խօսի իր աղգին՝ ինչպէս նաեւ Հռոմի եկեղեցիին հանդէպ անոր ունեցած «նուազեալ հաղորդակցութեան» մասին:

Այս բացատրութիւնը, «նուազեալ հաղորդակցութիւն», շատ հետաքրքրական կը դառնայ եթէ համեմատուի այն արտայայտութիւններուն՝ զոր յաճախ կը դործածէ Պօղոս Զ. Պապը, Վատիկանեան Բ. Ժողովէն ետք, երբ կը խօսի «անկատար հաղորդակցութեան», «իրական՝ թէ եւ ոչ տակաւին ամբողջական՝ հաղորդակցութեան», «Արեւելքի եւ Արեւմուտքի եկեղեցիները միացնող դրեթէ ամբողջական հաղորդակցութեան» մասին: Ասով չեմ ուզեր հաստատել թէ Մխիթարի բացատրութիւնը՝ «նուազեալ հաղորդակցութիւն»՝ ճշտիւ ներփակէ աստուածաբանական ամբողջ բովանդակութիւնը այն բացատրութիւններուն՝ զոր Սրբ. Քահանայապետը այսօր յաճախակի կը դործածէ: Բայց կը կարծեմ թէ Մխիթարի այդ արտայայտութեան մէջ կարելի է նշմարել դրեթէ կանխազգացում մը, հետք մը այն բանէն՝ որ այդ դարուն արդէն կը պատրաստուէր, եւ որ աւելի յստակօրէն կ'իրականանայ մեր օրերուն: Կը կարծեմ թէ հոն կարելի է նշմարել հիմը՝ հաղորդակցութեան այն եկեղեցաբանութեան, որ սրտին մէջ իսկ է արեւելեան մտածումին՝ եկեղեցւոյ մասին: Այսպիսի շրջածիրի մը մէջ է ահա՝ որ կրնայ կարեւոր դառնալ, եւ պէտք է կարեւոր դառնայ՝ միութեան ներկայ փնտռումին ընծայուած խոշոր տուրքը: Վատիկանեան Բ. Ժողովը, մէկէ աւելի անգամներ, կը շեշտէ այն մասնաւոր դերը՝ զոր արեւելցի Կաթողիկէները պէտք են ստանձնել Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ միութեան վերակազմութեան ի նպաստ: Եւ անոնք պիտի յաջողին այս դերին մէջ այն չափով՝ որքան պիտի գիտնան ամբողջապէս յանձնառու ըլլալ, փնտռողի եւ վերանորոգումի այն մեծ հոսանքին ուղղութեամբ, որ կը յատկանչէ եկեղեցւոյ այսօրուայ կեանքը:

Եւ ասիկա յատկապէս կարեւոր է ձեզի համար, Մխիթարի Որդիներ, եթէ կ'ուզէք հաւատարիմ մնալ ձեր Հիմնադրին մեծ յայտնատեսութիւններուն: Հաւատարիմ, այն ճշմարիտ հաւատարմութեամբ՝ մարդու մը հանդէպ, որ գիտցաւ նորոգել իր ժամանակը, եւ ապահովաբար պիտի գիտնար նորոգել նաեւ մերը, քանի որ ասիկա բաւականաչափ արմատացած էր էականին մէջ, ազատ ըլլալու ատիճան՝ նկատմամբ այն բազմազան ձեւերուն, զոր այդ էականը պէտք

31. NURIKHAN, էջ 359: Նամակ Թ. 250 (Ապրիլ 1726):

է առնէ: Պիտի ուղէի ղինք համեմատել Աւետարանի այն «հաւատարիմ դպիր»ին, որ դիտէ հանել իր դանձէն նորն ու հինը:

Մեր յոյսն է որ շուտով հասնի այն պահը, երբ Հայ Եկեղեցւոյ հետ, միասնաբար, պիտի կարենանք յստակել վարդապետական այն հարցերը՝ որոնց մասին կը համարինք թէ լիովին համաձայն չենք: Այս հանդերձանին պատրաստութեան մէջ, որ կը յուսանք թէ մօտ է, կարեւոր պէտք է ըլլայ ձեր նպաստը: Ձեր Միաբանութեան նպատակն է «Հայ Կաթողիկէ հասարակութեան կրօնական ու մշակութային կեանքին բարձրացումը»<sup>32</sup>: Բայց աւելի ծաւալուն կերպով, այս մշակութային եւ կրօնական ծառայութիւնը պէտք է մատուցուի բովանդակ հայ աղբիւն, եւ այն ոգիով, որ այնքան ալ հին է, եւ այս օրերուս կը վարձուէ մեղ. ձեզի կը վիճակի մասնաշատուկ ուշադրութիւն մը դարձնել այն հարցերուն, որոնք տակաւին պէտք են լուսարանուիլ՝ մեր եղբայրներուն հետ: Եւ դուք ասիկա ամէնքէն աւելի լաւ կերպով կրնաք կատարել, հայ աստուածաբանական դրականութեան ձեր ծանօթութեամբ, անոր այլեւայլ հոսանքներուն հասկացողութեամբ, եւ ներկայիս զայն ողբերգի շարժումներուն նկատողութեամբ:

Այս խորհրդածութիւնը պէտք է իբր մեկնակէտ ունենայ Հայ Եկեղեցւոյ եւ Կաթողիկէ Եկեղեցւոյ, Հռոմի եւ Էջմիածնի միջեւ փոխյարաբերութիւններու յարաճուն իրականութիւնը: Պէտք է ծագում առնէ խորացումէ մը այն ամէն ինչի՝ որ հասարակաց է մեզի, խորունկ այն հաղորդակցութեամբ՝ որ առաջ կու գայ միեւնոյն խորհուրդներուն եւ յատկապէս Ս. Հաղորդութեան ծիսակատարումէն եւ ապրումէն, այն իրողութենէն թէ մեր Եկեղեցիները՝ իբր քոյր եկեղեցիներ՝ դարձեալ կը գտնեն իրար, իրենց Եպիսկոպոսներու առաջնական յաջորդականութեան մէջ: Այս ուղղութեամբ է որ, բազմացնելով չփումները, զարդանալով դործակցութեան բոլոր կերպերուն մէջ, պիտի կարենանք ընել այնպէս՝ որ, կարելիին չափ շուտով, «նուազեալ հաղորդակցութիւնը» դառնայ դարձեալ ամբողջական հաղորդակցութիւն:

Այս յոյսն էր որ կ'ողբերէր Մխիթարի դործունէութիւնը: Ինք յայտնատեսութիւնն ունեցած էր նոր ուղիներու, որոնք կրնային նւապատակին առաջնորդել: Ձեզի՝ Մխիթարի Որդիներու կ'իյնայ օգտագործել այսօրուան բոլոր հնարաւորութիւնները, ձեզի՝ Որդեգիրներդ Կուսին, Վարդապետներդ ապաշխարութեան, որ կը սատարէ փրկատոնեաներու միութեան:

ՅՈՎՀԱՆՆԵՍ Կարդ. ՎԻԼՊՐԱՆՏՍ

32. *Annuario Pontificio*, Città del Vaticano 1977, էջ 1194:

## MECHITAR E L'UNIONE DEI CRISTIANI\*

L'invito dei monaci Mechitaristi di San Lazzaro mi onora. E l'ho accettato molto volentieri per condividere con questa illustre assemblea alcuni pensieri sull'eminente figura di colui che è stato il fondatore delle comunità armene di Venezia e di Vienna: il servo di Dio Mechitar.

Ho accettato questo invito perché esso mi è stato rivolto dai simpatici monaci armeni. Di essi ho imparato ad apprezzare il lavoro scientifico sin dal tempo in cui insegnavo filosofia nel seminario della nativa diocesi di Haarlem. E' stato del resto nella diocesi di Haarlem, e più precisamente ad Amsterdam, che, nel 1666, Oskan di Erevan faceva stampare, nella tipografia della colonia armena, la prima Bibbia in lingua armena. Questa tipografia poi fu acquistata da Mechitar e sta alle origini della vostra attuale, così insigne<sup>1</sup>.

Ho accettato volentieri di tenere questa conferenza perché sono stato attratto dalla possibilità di riflettere con voi — io, da Presidente del Segretariato per l'Unione — su cosa intendesse Mechitar, il « fautore dell'unione » della Chiesa armena, quando egli parlava di unione; che cosa Mechitar intendesse per « unione », quando fondava la sua Congregazione con lo scopo di promuovere questa unione. Vorrei riflettere con voi se la concezione di unione di Mechitar era simile a quella di Papa Giovanni XXIII

\*) *Prolusione ufficiale di S. Em.za Rev.ma il Sig. Card. Giovanni Willebrands, Primate d'Olanda e Presidente del Segretariato per l'Unione dei Cristiani, tenuta il 22 ottobre 1977, nel Palazzo Ducale di Venezia, in occasione della solenne commemorazione del terzo centenario della nascita dell'Abate Mechitar.*

1. Cf. P. MINAS NURIKHAN, *Il servo di Dio Abate Mechitar*, Venezia 1914, pp. 329 s (in seguito: NURIKHAN).